ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

I

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՎ ԳՏԱԾՈՆԵՐ

DOI:10.54503/2953-805X-2023.5-8

Բենիկ Վարդանյան
ՀԱԻ/ՀՊԹ

ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԿԵՌԵՐԸ

Սույն հոդվածում քննության են առնվել կուր-արաքսյան միջագետքի միջին, ուշ բրոնզեդարյան ու երկաթեդարյան հուշարձաններից հայտնաբերված բրոնզե կեռերը: Կեռ պարունակող դամբանների և քննվող առարկաների ձևաբանական վերլուծության մեթոդով կատարվել է կեռերի տիպաբանություն, ժամանակագրական և գործառութային դասակարգում, ըստ որի՝ առանձնացվել է հինգ տիպ: Առաջարկվող տիպաբանությամբ հնարավոր է ուրվագծել կեռերի ժամանակագրական, կառուցվածքային և գործառութային հատկանիշների ձևափոխությունը: Քննվող տարածաշրջանում կեռերը հանդիպում են դամբանային համալիրներում կամ «սրբավայրերում»: Ընդ որում, առաջին պարագայում տարբերակվում է կեռերի՝ ծիսական առարկա (թաղման արարողության ժամանակ կաթսայից զոհաբերության մսի դուրս բերում) և իշխանության խորհրդանշան լինելը (առկա են ցլագլուխ, զարդարուն իրանով կեռեր):

Հիմնաբառեր՝ Կուր-արաքսյան միջագետք, բրոնզի և երկաթի դարեր, առանձնաշնորհյալություն, թաղման ծես, կեռ, կաթսա, ցլի զոհաբերության ծես, իշխանության խորհրդանիշ:

Ներածություն

Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններում փաստագրվել են կեռեր, որոնց հետազոտությամբ ուրվագծվում են տարածաշրջանում այդ առարկաների ժամանակագրության, տարածվածության, տիպերի, գործառույթին առնչվող հարցերը:

Հայաստանից հայտնաբերված կեռերը քննության են ենթարկել Ե. Բայբուրդյանը, Տ. Խաչատրյանը[1], Ա. Գնունին[2], Ս. Դևեջյանը[3], Լ. Պետրոսյանը[4]: Կեռերն առավել հանգամանալից քննել է Ս. Եսայանը[5], որն ըստ ձևի դրանք բաժանել է երեք տիպի: 1-ին տիպը ներառում է 14–22 սմ երկարությամբ կեռերը, որոնք ստորաբաժանվել են երկու տարբերակի: 1ա տարբերակում միջինբրոնզեդարյան կեռեր են, որոնք գտնվել են կաթսաների համատեքստում և ունեն փայտե բռնակն ամրացնելու համար խողովակաձև կոթառ: Սրանց վերնամասը սրածայր է և կիսակլոր[6]: 1բ տարբերակի կեռերը նման են առաջին տարբե-

---

1 Хачатрян 1959.

2 Гнуни 2003, 78.

3 Դևեջյան 2006; 2022:

4 Պետրոսյան 2018:

5 Եսայան 1987:

6 Եսայան 1987, 63:

րակին, սակայն ունեն սուր ծայրի ավելի թույլ ճկվածություն և մանգաղաձև են (Լճաշեն, Թաքիա)[7]: Ըստ Ս. Եսայանի՝ երկրորդ տիպի կեռը հատույթում կլոր, 63–65 սմ երկարությամբ, երկու ծայրերը հակադիր ծռված ձող է (Լճաշենի №8 դամբանաբլուր, ՀՊԹ 2009/384): Առանձնացվում է նաև երրորդ տիպը, որն ունի երկար կոթ, որին հագցվել է փայտե բռնակ: Վերջինիս վերնամասը նախշազարդված է (Տոլորս)[8]:

Կեռ պարունակող դամբանների ձևաբանական վերլուծության, նորահայտ տվյալների և մեր դիտարկումների հիման վրա սույն հոդվածով առաջարկվում է ձևի, գործառույթի և ժամանակագրական հատկանիշների վրա հիմնված դասակարգման նոր համակարգ, ինչպես նաև նախանշվում են վերջիններիս գործառութային ոլորտները:

Ուսումնասիրության աշխարհագրական, ժամանակագրական սահմանները և աղբյուրագիտությունը

Սույն հոդվածում քննության են ենթարկվել միայն Կուր և Արաքս գետերի միջակայքի միջին և ուշ բրոնզի և երկաթի դարաշրջանների կեռերը: Հայաստանում կեռերի վաղագույն օրինակները հայտնի են ԹՎ շրջափուլի հուշարձաններում, իսկ ամենաուշ օրինակները վերաբերում են երկաթի դարին (մ.թ.ա. 13–7-րդ դդ.): Կեռերի հետազոտությունը կատարվել է ըստ հրատարակված նյութերի և Հայաստանի թանգարանների հնագիտական զետեղարաններում պահվող առարկաների ուսումնասիրության [նկ. 1, էջ 236]:

Կեռերի դասակարգումը

Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը բաժանվում են երեք ժամանակագրական փուլերի՝ միջին և ուշ բրոնզի դար և երկաթի դար: Սակայն ժամանակագրական պատկանելությունը դասակարգող հիմնական հատկանիշը չէ: Դասակարգման և տիպաբանության հիմքում ընկած են իրերի կառուցվածքային առանձնահատկությունները և գործառութային հավանական ոլորտները:

Հետազոտվող ընտրույթում կեռերն ըստ ճանկերի քանակի բաժանվում են երկու խմբի՝ միաճանկ (1) և երկճանկ (2): Միաճանկ կեռերի մեջ տարբերակվում են ինչպես սրածայր կոթառով, այնպես էլ խողովակակոթառ տարբերակները:

Ըստ այդմ, ելնելով կեռերի ժամանակագրական, կառուցվածքային և գործառութային հատկանիշներից, վերջիններս դասակարգվում են՝

Տիպ 1: Միաճանկ, խողովակակոթառ, 10–22 սմ երկարության կեռեր: Ըստ ժամանակագրական և կառուցվածքային հատկանիշների առանձնացվում է երեք տարբերակ:

1-Ա: Միջինբրոնզեդարյան (ԹՎ շրջափուլ)[9] օրինակներն են և հայտնի

---

7 Եսայան 1987, 64:

8 Եսայան 1987, 65:

9 Խողովակաձև լայնացող կոթառով միջինբրոնզեդարյան կեռի համար հմմտ. նաև Гамбашидзе и др. 2010, 561, табл. LI:836.

են կաթսաների հետ մեկտեղ (օրինակ՝ Վանաձորի «թագավորական»[10] [նկ. 2/1], Լոռի բերդի №6, 79[11] [նկ. 2/2–4], Քարաշամբի №750[12] դամբաններից [նկ. 2/5]:

1-Բ: Ուշբրոնզեդարյան կեռերն են, որոնք հայտնի են Լճաշենի №2[13] [նկ. 2/6], №3 (ՀՊԹ 2009/68) [նկ. 2/7], №8 (2049/140) [նկ. 5], Ի-78 (ՀԱԱՊԹ 2138/69ա-գ) [նկ. 6][14], Լոռի բերդի №№25, 46[15] [նկ. 2/8–9] և Ցիտելգորեբիի (Վրաստան) №1[16] ՈՒԲ դարի դամբանաբլուրներից:

Ուշբրոնզեդարյան նյութերում ամենավաղը Լճաշենի №3 Մեծ դամբանաբլրի օրինակն է, որի ուղղաձիգ, խողովակաձև լայնացող կոթառն ունի 1 սմ տրամագիծ (երկ.՝ 13 սմ) [նկ. 4]: Կոթառի մեջ պահպանվել են փայտի և գամի հետքեր: Այս կեռն իրանի ձգվածությամբ հիշեցնում է միջինբրոնզեդարյան կեռերը:

Լճաշենի №2 Մեծ դամբանաբլրի կեռի հայտնաբերման հանգամանքները մնում են անորոշ: Այն 14 սմ երկարությամբ, սնամեջ, խողովակաձև, 2 սմ տրամագծով կոթառավոր կեռ է, որն ունի կտցաձև կեռամաս[17] [նկ. 7][18]: Լճաշենի ուշ բրոնզի դարի կեռերի այս խմբի մեջ չափերով առանձնանում է №8 Մեծ դամբանաբլրի օրինակը: Այն 24 սմ երկարության, 2 սմ տրամագծով խողովակակոթառ առարկա է, որի բուն կեռամասը չի պահպանվել: Կոթառի մեջ պահպանվել է փայտե կոթն ամրացնելու գամը [նկ. 5]: Լճաշենում 1978 թ. Ի-78 դիպվածային բացված եռաշերտ դամբանի ՈՒԲ դարի շերտից գտնված 7 սմ երկարությամբ կեռի խողովակաձև լայնացող կոթառի մեջ տեսանելի է փայտի կոթի մնացորդ [նկ. 6, էջ 239]:

Լոռի-բերդի №№25, 46 դամբանների այս խմբի կեռերն աչքի են ընկնում գեղարվեստական ձևավորմամբ: Առաջինը սրածայր կեռով, պարանաձև ոլորված իրանով է, որի խողովակաձև կոթառին առկա են փայտե կոթն ամրացնելու համար նախատեսված գամի անցքեր[19]: Լոռի բերդի №46 դամբանից գտնվել է հիմքում քառակող, եռանկյունաձև հանվածքներով, զարդարուն կոթառով սրածայր մի կեռ[20] [նկ. 2/8–9]:

---

10 Դևեջյան 2006, 251, նկ. 140/5:

11 Դևեջյան 2006, 20, 67, նկ. 72/6, 99/2–3:

12 Melikyan 2015, 9, աղ. 14/2.

13 Պետրոսյան 2018, աղ. 141/2:

14 Հ.Իսրայելյանի պեղումներ: Խառնաշփոթից խուսափելու համար գործածվում է Ի-78 ծածկագիրը, որտեղ Ի՝ Իսրայելյան, 78՝ պեղման թվականը:

15 Դևեջյան 2022, աղ. 51/7, 95/5:

16 Abramishvili R., Abramishvili M. 2008, 352:

17 Պետրոսյան 2018, աղ. 141:

18 Կեռի և կաթսաների հարաբերակցությունը խցում անհայտ է: Հիշատակելի է, որ №2 դամբանաբլրում դրված չորս սայլերից յուրաքանչյուրի մոտ կար պղնձե մեկական կաթսա: Կաթսաներից մեկի մեջ գտնվել է երկու կացին [Մնացականյան 1957, 42; Мнацаканян 1957, 146–153]: Հավանաբար այս կեռը նույնպես գտնվել է այդ կաթսաներից որևէ մեկի համատեքստում:

19 Դևեջյան 2022, 80, աղ. 51/7:

20 Դևեջյան 2022, 80, աղ. 95/5:

Ցիտելգորեբիի №1 դամբանաբլրում բրոնզե երկու կեռերից առաջինը կտրող ինչ-որ գործիքի հետ դրված էր կաթսայատիպ անոթի մեջ, իսկ երկրորդը խցի հյուսիսարևմտյան անկյունում էր՝ կաթսայի շուրթից կախված: Կաթսայի մեջ առկա էր ևս մեկ կտրող գործիք[21]: Ցիտելգորեբիի կեռն ունի լայնացող խողովակաձև կոթառ, որի վրա նկատելի են գամի անցքեր:

1-Գ: Երկաթեղարյան կեռերն են, որոնք հայտնի են Պարադիզֆեստունիգից և Գոգդաջայից: Պարադիզֆեստունգի №112 դամբանի հարավարևելյան անկյունում դրված չորս բռնակներով բրոնզե կաթսայի մեջ գտնվել են անդրկովկասյան տիպի սակր, ոսկե ուլունք, կեռ, երկժանի, դաշույն, սանձ, գոտի և այլ իրեր[22]: Կեռը (երկ.՝ 19 սմ) ունի փոքր բացվածքով սնամեջ խողովակավոր լայնացող կոթառ[23] [նկ. 2/10]: Գոգդաջայի №3 դամբանի արևմտյան կողմում, բրոնզե քառականթ կաթսայի մեջ հայտնաբերվել են սակր և բրոնզե կեռ (երկ. 11,3 սմ): Լայնացող խողովակաձև կտրվածքում շրջանաձև կոթառը սնամեջ է, իսկ կեռի հատվածում՝ քառակող[24] [աղ. 1/11]: Տարածաշրջանում սրանք խողովակաձև կոթառով կեռերի մեզ հայտնի ամենաուշ օրինակներն են:

1-Դ: Սրանք Շիլդայի (Վրաստան) «սրբավայրից» (մ.թ.ա. 14–13-րդ դդ.) հայտնաբերված սնամեջ կոթառով բրոնզե թիթեղն իրար առաջ ծալելու միջոցով ստացված երեք փոքրադիր կեռեր են[25] [նկ. 2/12a-c]:

Տիպ 2: Կոթավոր կեռեր են և ներկայացված են երկու տարբերակով:

2-Ա: Վաղագույնը Քարաշամբի ՄԲ-ի դարի ԹՎ փուլի №633 դամբանաբլրի (մ.թ.ա. 20–19-րդ դդ.) կեռն է[26]: Այն ունի տափակեցված սուր կոթ, որի իրանը հատույթում կլոր է, իսկ կեռը՝ քառակող [նկ. 3/1, էջ 238]:

2-Բ: Ցլագլուխ վերնամասով, կոթավոր կեռեր: Այսպիսիք հայտնի են Ավրանլոյից, Տոլորսից, Սիրխովենդից:

Ավրանլոյում (Վրաստան) պատահական բացված հիմնահողային դամբանում կեռը դրված էր կմախքի գանգի մոտ, իսկ բրոնզե ցլագլուխ վերնամասը և գոտեկապը՝ վերին վերջույթների մոտ[27]: Կեռի իրանը զարդարված է խորադիր օղակներով և քառանկյուն վրադիր ելուստներով [նկ. 3/2–3, էջ 238]:

Ցլագլուխ, խողովակաձև (երբեմն՝ ցանցկեն բռնակով) բրոնզե այս առարկաները Հայաստանում և Արցախում հայտնի են մի քանի օրինակով:

---

21 Abramishvili R., Abramishvili M. 2008, 352, fig. 5.6:

22 Nagel, Strommenger 1985, 117, fig. 87. Այս տարբերակին է վերագրվում Թաքիայի (Աղվեսաձոր, Բյուրական) կեռը [Мартиросян, Хачатрян 1959, рис. 4]: Համատեքստի բացակայության պատճառով այն այստեղ չի քննվում: Շիրակավանի №27 դամբանի նյութերում հիշվում է «երկաթե կեռ» [Թորոսյան և այլք 2002, 100, աղ. LXIX, 1], որը կոտրված ոլորուն անորոշ բեկոր է և չունի ոչ մի ընդհանրություն քննվող առարկաների հետ (ՀԱԱՊԹ 266/72):

23 Nagel, Strommenger 1985, աղ. 47, 5.2698 o.

24 Nagel, Strommenger 1985, աղ. 65, 2.2544 k.

25 Pizckhelauri 1984, 42–65, fig. 41. 20–22.

26 Melikyan 2015, 7–8, fig. 15/2.

27 Нариманишвили 2005, 141.

Ցլագլուխ վերնամասերը, սակայն, չեն դիտարկվել իբրև կեռի բաղադրիչ մաս և քննության են առնվել առանձնաբար:

Օրինակ՝ Տոլորսի (Սյունիք) վաղերկաթեդարյան դամբանաբլրի նյութերի մեջ հիշվում է 37 սմ երկարությամբ երկմաս կեռը, որն ունի 4 սմ երկարությամբ փայտե բռնակի մեջ ամրացվող կոթ (1911/4): Վերջինիս ծայրին պահպանվել է գամը: Կեռի իրանը զարդարված է չորս վրադիր հավելումներով[28]: Փայտե կոթը զարդարված է եղել երկու շրջանաձև և երկու քառակող գոտեկապերով: Շրջանաձև գոտեկապերի իրանին արված են գամերի համար նախատեսված 12–13 անցքեր [նկ. 8]: Տոլորսի այս դամբանից հայտնի է նաև ցլագլուխ արձանիկ (1911/24): Արձանիկը քանդակված է մեծ վարպետությամբ, ունի արտահայտիչ, դեպի ներս ծռված եղջյուրներ, աչքերը՝ ուռուցիկ գնդիկներով: Դունչը երկար է, ռունգերն ընդգծված չեն (1911/24)[29]:

Հաշվի առնելով Ավրանլոյի նույնատիպ առարկայի վերակազմությունը՝ կարծում ենք, որ Տոլորսի այս արձանիկն ու գոտեկապը պատկանել են նույն դամբանից հայտնաբերված կեռին [նկ. 8, էջ 240]:

Սիրխովենդի №1 դամբանի (Արցախ) կեռից պահպանվել են միայն կեռամասը և իրանը զարդարող քառանկյուն ելուստը[30]: Զարդված կոթի հիմքի մոտ նկատելի է հագցված բրոնզե օղի հետք[31] [նկ. 2/5]: Խցում՝ կմախքի մոտ, դրված էին ձիու, ցլի և շան կմախքներ, իսկ վերջիններիս մոտ՝ մետաղե (այդ թվում՝ մեկ երկժանի) առարկաներ և խեցանոթներ[32]:

Ավրանլոյի կեռին հար և նման մի առարկայի իրան գտնվել է Վանաձորի «Դիմաց» դամբանադաշտում բացված քարարկղային մի դամբանից (ԼՓԵԹ 316), որի հնագիտական համատեքստը հայտնի չէ [նկ. 9, նկ. 2/4]: Հ. Մարտիրոսյանն այս առարկան բնորոշել է երկժանու մաս և զուգահեռ բերել Բալլուկայայի դամբանի օրինակը[33]: Առարկան (երկ.՝ 22,2 սմ) ունի փայտի (կամ փայտե հիմքով այլ առարկայի) մեջ ամրացվող քառանկյուն սրացող կոթ (երկ.՝ 3 սմ): Ութանկյուն խաչարդն ունի 3,7 սմ երկարություն: Իրանը զարդարված է 2,9 սմ երկարությամբ 8 խորադիր օղակներով, ավարտվում է վրադիր երեք հավելումով (երկ.՝ 1,5 սմ, հաստ.՝ 9 մմ) [նկ. 2/4]:

Տիպ 3: Ոլորուն իրանով միաճանկ կեռեր, որոնք ներկայանում են երկու տարբերակով:

---

28 Мнацаканян 1954, 227 (առանց գծագիր); Եսայան 1987, 64, աղ. 3.6:

29 Բրոնզե այս ցլաքանդակը զուգահեռներ ունի նաև Լոռի բերդի №9 [Դևեջյան 2022, 91, աղ. 17/1] և Լճաշենի №1 դամբանաբլուրներում (2007/35): Երկրորդ պարագայում եզան սնամեջ արձանիկն ամրացված է եղել սայլի առեղի ծայրին: Լոռի բերդի №9 դամբանից հայտնի են նաև այնպիսի բրոնզե խողովակաձև առարկաներ [Դևեջյան 2022, աղ. 18, 1, 6–7], որոնք նույնական են Լճաշենի նշված դամբանաբլրի օրինակներին (2009/425): Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ գործ ունենք փոխադրամիջոցի զարդարման նույնական պատկերացումների հետ:

30 Кушнарева 1957, рис. 10/3.

31 Եսայան 1987, 65:

32 Кушнарева 1957, 147.

33 Мартиросян 1964, 144, табл. 13/6.

3-Ա: Կրկնամուրճ բռնակով ոլորուն իրանով կեռեր: Հայտնի են Լոռի բերդի №15[34] [նկ. 2/6] և Սաֆար-խարաբայի №8 դամբանից [նկ. 2/7]: Սրանք T-աձև (կրկնամուրճ) բռնակով, ոլորուն իրանով առարկաներ են: Երկու պարագայում էլ կեռերը հենված են եղել կաթսաներին:

3-Բ: Երկու ծայրերը հակադիր ծռված կեռեր: Այսպիսիք երեք օրինակով հայտնի են Լճաշենից: Լճաշենի №8 դամբանաբլրից հայտնաբերված ոլորուն իրանով 63 սմ երկարությամբ բրոնզե այս առարկան մի ծայրից տափակեցված է: Առարկայի հակառակ ծայրին դեպի ներս ուղղված կեռամասը կտրվածքում շրջանաձև է: Ծայրերը ծռված են հակադիր՝ նույն առանցքի շուրջը (ՀՊԹ 2009/384) [նկ. 10]: Լճաշենի №10 (ՀՊԹ 2009/340) դամբանաբլրից հայտնաբերված 70 սմ երկարությամբ բրոնզե առարկան հակադիր ծռված ծայրերով, մի կողմը տափակեցված, մյուս կողմը կեռաձև, հիմքով քառակող առարկա է [նկ. 11]: Լճաշենի №1 դամբանաբլրից գտնված բրոնզե այս առարկան, որը եռաժանու և ծիսական այլ առարկաներ պարունակող կաթսայի տակ էր դրված, Հ. Մնացականյանը բնորոշել է որպես ձող, որի ներսի շերտը պտուտակաձև է, իսկ դրսի շերտը՝ այլ մետաղից: Իրականում իրը բաղկացած է միայն ոլորուն իրանով բրոնզե լարից, որի վրա, ինչպես 2009/384-ի պարագայում, առկա է կորոզիայի՝ իրանի ձևն ընդունած շերտ: Դրա հետևանքով առարկայի ոլորուն իրանը պտտվում է իր վրա ձևավորված և անջատված կորոզիոն շերտի մեջ: Առարկայի կեռամասերը չեն պահպանվել (2007/17, նկ. 12):

Տիպ 4: Երկճանկ կեռեր: Հայտնի են երկու տարբերակով:

4-Ա: Երկճանկ կեռաձև բռնակներով շերեփներ են: Հայաստանում հայտնի է Արթիկի №335 դամբանից, որի հետ գտնվել է նաև բրոնզե շերեփ: Կեռ-շերեփի կեռը քառակող ձողից (երկ.՝ 66 սմ) պատրաստված երկճանկ սրածայր մատներով առարկա է, որը բրոնզե թասին ագուցված է մետաղական գամերով[35] [նկ. 2/8]:

Կեռաձև բռնակով շերեփներ մի քանի օրինակով հայտնի են նաև Իրանից: Սիալկի 2-րդ դամբանադաշտի №3 դամբանի օրինակը միաճանկ է[36] [նկ. 2/9]: Այդպիսիք հայտնի են նաև Մարլիկի №№36, 52, 26 դամբաններից (երկ.՝ 79–90 սմ), որոնք թվագրվում են մ.թ.ա. 13–12-րդ դդ.[37]: Իրանի օրինակների ոլորուն ձողը թասի հետ միաձույլ է, որն ավարտվում է սրածայր, խորը ծունկ կազմող կեռով[38]: Իրանի երկաթեդարյան այլ հնավայրերում ևս (Խուրվին, Գավրա, Հասանլու) հայտնի են նմանատիպ առարկաներ: Հավանական է, որ Իրանից հայտնի կեռ-շերեփները նախապես պատրաստված են եղել որպես շերեփ: Ելնելով որոշակի գործողություն կատարելու անհրաժեշտությունից, հետագայում ծայրը ծռել են և կեռ ստացել՝ մեծացնելով աշխատանքային գործիքի օգտակա-

34 Դևեջյան 2022, աղ. 30/2:

35 Хачатрян 1975, 219, рис. 130:

36 Ghirshman 1939, table L, 545.

37 Piller 2008, 167–220.

38 Negahban 1996b, table 133, 925–926.

րությունը: Այդ է վկայում ավելի վաղ թվագրվող Թեփե-հիսսարի ուղիղ պոչով (առանց կեռ) շերեփի կառուցվածքը[39]:

4-Բ Երկճանկ բռնակավոր կեռեր հայտնի են Լոռի բերդի №21 և №84 դամբանից[40] [նկ. 2/8–9]: Լոռի բերդի №21 դամբանախցի կենտրոնական մասում դրված էր բրոնզե եռոտանի սկուտեղ, իսկ դրանից հյուսիս-արևելք գտնվող երեք կճուճների վրա խաչաձև դրված է եղել բրոնզե երկժանի և երկճանկ մի կեռ: Այս դամբանից է գտնվել նաև մարդակերպ բռնակով բրոնզե ծիսական շերեփը[41]:

Լոռի բերդի №84 հիմնահողային խցում դրված էր պղնձե մեկ կաթսա, մեջը՝ կճուճ և ինչ-որ գործվածքի մնացորդ: Մեկ այլ պղնձե կաթսա, բարձր կանթով, դրված էր նախորդի կողքին, որի վրա կար երկար իրանով, զարդարուն բռնակով երկճանկ կեռ[42]:

Տիպ 5: Կեռանման խողովակաձև կոթառով փոքրադիր առարկաների ինքնատիպ հավաքածու է հայտնի Պարադիզֆեստունգից, որոնք առարկաներ են: №4 դամբանից հայտնի են 3 (երկ.՝ 4,8 սմ), №60-ից՝ 24 (երկ.՝ 4,8–6 սմ), №166-ից՝ 4 (երկ.՝ 5–6 սմ), №112-ից՝ 2 (երկ. 6,4սմ), Գոգդաջա №1-ից՝ 14[43] [նկ. 3/10–11] այդպիսի առարկաներ: Սրանք բնորոշվել են որպես «մանգաղանման կոխակոթառ բրոնզե առարկաներ»[44]: Դամբաններում հայտնաբերելու հանգամանքների մասին տվյալներ հայտնի չեն:

Կեռ պարունակող դամբանների սոցիալ-ժողովրդագրական պատկերը

Աղյուսակ 1.
Կեռ պարունակող դամբանների համապատասխան ձևա-բանավիճակագրական աղյուսակ

Դամբանաբլուր	Դար	Սեռատա-ռիքային	Կաթսա	Կեռ	Եռաժանի	Երկժանի	Սակր	Դաշույն	Նիզակ	Դուր
Վանաձոր	22–21	դիակիզում	+	+			+	+		+
Լոռի բերդ №6	20–19	դիակիզում	+	+						
Լոռի բերդ 79	22–20	դիակիզում	երկու կաթսա	երկու կեռ				+		
Քարաշամբ 750	19–18	դիակիզում	+	+				+	+	
Քարաշամբ 633	20–19	25–35 տ. տղամարդ		+				+		

39 Schmidt 1933, table CXX H 733.

40 Դևեջյան 1986, 116, աղ. 3/2; Դևեջյան 2022, 25–26, աղ. 43/6:

41 Դևեջյան 2022, 26, աղ. 5:

42 Դևեջյան 2022, 54:

43 Nagel, Stromennger 1985, 96, 133, 118.

44 Nagel, Stromennger 1985, table 11, 16–18, table 29, 10, table 47. 3–4, table 53, 7.f-I; 43, pic. 18.3.

Լճաշեն 1	15–14	հավանաբար տղամարդ	+	+	+		+	+		+
Լճաշեն 3		35–45 տ. տղամարդ	+	+ 13 սմ			+	+	+	+
Լճաշեն 8		1. 35–45 տ. տղամարդ 2. 18–20 տ. տղամարդ	+	երկու կեռ						
Լճաշեն 10		1. 35–45 տ. տղամարդ 2. 18–22 տ. տղամարդ	+	+	+		+	+		
Ցիտելգորերի 1	15–14	հավանաբար տղամարդ	կաթսայատիպ անոթ	երկու կեռ				+		
Լոռի բերդ 15		մարդու ողերի քայքայված մնացորդներ	+	+ 83 սմ			+	+		
Լոռի բերդ 21		մարդու 9 ատամ	շերեփ	+ երկճանկ 52 սմ		+ 43.5 սմ	+			+
Լոռի բերդ 84		40-ը անց տղամարդ	2	Երկճանկ 54 սմ				+		+
Լոռի բերդ 25		չորոշվող	կաթսայատիպ անոթ	+ 31 սմ	+ 65 սմ					+
Լոռի բերդ 46		կմախք չի հայտնաբեր-վել	բրոնզե քայքայված թիթեղներ	+ 12.5 սմ			+	+		
Սաֆար-խա-ռաբա 8		հավանաբար տղամարդ	կաթսայատիպ անոթ	+				+		
Արթիկ 335		չորոշվող	կաթսայատիպ շերեփ	շերեփ-երկճանկ կեռ						
Ավրանլո 1		հավանաբար տղամարդ	կաթսայատիպ անոթ	+ ցլագլուխ				+		
Լճաշեն Ի-78	14–13	հայտնի չէ		+						
Լճաշեն 2		խմբային թաղում	+	+ 14 սմ			+	+	+	
Տոլորս	13–12	ավերված դամբան	+	+				+		
Պարադիզ-ֆեստունգ 112		արական, տարիքը չորոշված	+	+		+		+		
Գոգդաջա 3		չորոշված	+	+ 11.3 սմ			+			
Սիրխովենդ 1		չորոշված		+		+				
Ընդամենը՝			21	24	3	3	9	16	2	6
			87.5%		12.5%	12.5%	37.5	67%	8.3%	25%

Քննության ենթակա ընտրույթում (n=24, աղ.1) առկա են ինչպես դիակիզման (միջին բրոնզեդարյան խումբ), այնպես էլ դիադրման եղանակով արված թաղումներ (ուշ բրոնզ, երկաթի դար): Դիադրման եղանակով դամբաններում թաղումները հիմնականում անհատական են: Ընտրույթում բացառություն են կազմում միայն Լճաշեն №8,10 զույգ և №2 խմբային դամբանաբլուրները: Սեռատարիքային հատկանիշներով հստակ նույնացվող կմախքները հինգն են (արական, 18–45 տ.) [աղ. 1]:

Քննվող բոլոր դամբանային համալիրները ենթադրում են համայնքներում յուրահատուկ կարգավիճակ ունեցող անձանց թաղումներ: Ուստի կեռերի և թաղվածների սեռա-տարիքային հատկանիշների միջև փոխադարձ կապ չի նշմարվում:

Այսպիսով, կեռերի միջոցով կատարված արարողությունները (իմա՝ դամբանային համալիրներում դրանց հայտնաբերումը) պայմանավորված էին թաղված անձի սոցիալական դիրքով, այլ ոչ սեռա-տարիքային հատկանիշներով:

Կեռերի հայտնաբերման համատեքստը

Քննվող տարածաշրջանում կեռերը, բացառությամբ Շիլդայի ուշբրոնզեդարյան «սրբավայրից» հայտնաբերված նվիրատվական օրինակների, գտնվել են դամբանային համալիրներում (n=24, աղ. 3): Կեռերը գտնվում են կաթսաների համատեքստում (կաթսաների մեջ, կաթսաներին հենած կամ տակը դրած): Հանդիպում են ինչպես բրոնզե կաթսաներ, այնպես էլ կավե կաթսայատիպ անոթներ (ընտրույթի 87,5%): Կաթսայի և կեռի համատեքստում հանդիպում են նաև դաշույններ (67%), սակրեր (37,5%), դուր (25%), երկժանիներ (12,5%) և եռաժանիներ (12,5%) [աղ. 3]: Կեռերի հնագիտական այս համատեքստը խոսում է ինչպես որոշակի արարողության համար կիրառվելու մասին, այնպես էլ արտահայտում է դամբանատիրոջ սոցիալական կարգավիճակին վերագրվող պատկերացումների որոշակի համակարգ:

Գործառութային ոլորտների նախանշում

Հայտնվելով դամբանային համալիրներում՝ կեռերը այս կամ այն չափով վերածվում են ծիսական առարկաների՝ անկախ իրենց նախնական գործածության բնույթից:

Ըստ գրավոր աղբյուրների ընձեռած սուղ տվյալների և հնագիտական համատեքստի վերլուծության՝ նախանշենք կեռերի գործառութային ոլորտները:

Դամբաններում հայտնաբերված կեռերը պատրաստված են մեծ վարպետությամբ, մի մասը նույնիսկ զարդագոտիներ և վրադիր այլ զարդեր ունի, սակայն սխալ կլինի միանշանակ կարծել, թե կեռերը քննվող դարերում օգտագործվում էին միայն թաղման որևէ արարողության ժամանակ[45]:

1-ին տիպի կեռերը կաթսաների համատեքստում են, որոնք Հայաստանում հանդիպում են ՄԲ-ի դարի ԹՎ փուլից մինչև 1-ին հազ. կեսեր: Բազմաթիվ ուսումնասիրողներ[46], հիմնվելով կաթսայի համատեքստում գտնված լինելու և որոշ գրավոր աղբյուրների տվյալի վրա, նշում են, որ խողովակակոթառ կեռերն օգտագործվել են կաթսայից զոհաբերված կենդանու միսը հանելու

[45] Ս. Եսայանը նշում է, որ Լճաշենի № 8 դամբանի կեռը կարող էր օգտագործվել թոնիրներից և օջախներից միս և այլ կերակուրներ հանելու նպատակով կամ կիրառվել որպես կրակխառնիչ [Եսայան 1987, 65]:

[46] Եսայան 1987, 64; Դևեջյան 2006, 100:

նպատակով[47]: Ռիգվեդայում նշվում է, որ «*այն ձողը, որով կաթսայում սպուգվում էր մսի եփվածությունը, այն անոթը, որը ծառայում էր հեղման ժամանակ, կճուճների ծիսացող կափարիչները, կեռը, կերակուրը՝ ծառայում են ձիուն*»[48]: Ճիշտ է, Ռիգվեդայում չի ասվում, որ կեռը (սանս.՝ áṅká) օգտագործվում էր կաթսայի մեջ, սակայն կարևոր է դրանց համատեղ հիշատակման հանգամանքը, ինչը կարող է վկայել փոխկապակցված գործառույթների մասին: Կաթսայից միսը կեռով հանելու գործողությունը վկայված է նաև Նարթական էպոսում[49]:

Հետազոտվող առարկաների մեծագույն մասը գտնվել է դամբանային համալիրներում կաթսաների համատեքստում՝ խոշոր եղջերավոր անասունների և այլ կենդանիների ոսկորների ուղեկցությամբ: Այստեղից պարզ է դառնում, որ գործ ունենք զոհամսի՝ կաթսայից հանելու նպատակով կեռերի կիրառության հետ: Այդ իսկ պատճառով քննության չեն առնվում կեռերի այլ գործառույթ (օրինակ՝ ձկնորսական պարագա[50] կամ հեծյալին ձիուց վայր բերելու զենք[51]) ենթադրող տեսակետները, որոնք քննվող տարածաշրջանի հնագիտական իրողությունների համար կիրառելի չեն:

Այսպիսով, կեռերի 1-ին տիպը կիրառվել է կաթսայից զոհամիսը հանելու ժամանակ:

Ի՞նչ արարողություն էր դա և ինչո՞վ էր պայմանավորված, որ դեպքերի մեծ մասում կաթսաների մեջ հայտնաբերվել են ԽԵԱ-ների ոսկորներ:

Հյուսիսկովկասյան հնագիտական մշակույթում հայտնի միաճանկ վեց կեռերից երեքը հայտնաբերվել են կաթսաների հետ[52]: Ըստ Լ. Իլյուկովի՝ միաճանկ կեռերը արդյունք են երկճանկ կեռերի ներքին զարգացման և պարզեցման, ինչը պայմանավորված էր *«բուկրանիայի»* (հուն.՝ βουκράνιον «ցլի գլուխ») գաղափարով[53]: Կաթսաներից սրբազան կերակրի (հիմնականում՝ տավարի մսի) հանումը պետք է տեղի ունենար հատուկ առարկաներով, որոնք խորհրդանշելու էին հենց ցլին:

Հետազոտողների կողմից արդեն փաստվել է տոնախմբության առանցքային տարրի՝ ԽԵԱ-ի (տավարի) զոհաբերության մասին[54]: Կեռի (հետագայում նաև երկժանու) կաթսայի՝ դամբանում միասին դրված լինելը վկայում է համայնքում առանձնաշնորհյալի թաղման ընթացքում հոգեհացի արարողության ժամանակ դրանց գործածության մասին, որի գլխավոր նպատակը *քրմի* կողմից

47 Хачатрян 1975, 227–229; Есаян 1987, 58–67; Դևեջյան 2006, 99–100; Ильюков 1979, 42–43.

48 Ригведа I, 162, 13–16.

49 Ильюков 1979, 42.

50 Горбунов 1992, 123.

51 Крупнов 1960, 192, 203.

52 Ильюков 1979, 142: Մայկոպյան երկճանկ կեռերի համար տե՛ս Ильюков 1979, 142: Ծայրերը կոած եռաճանկ առարկաներ հայտնի են Էշերայի դոլմենային դամբաններից [Ильюков 1979, рис. 3.1]: Կալմիկիայի Էվդիկի դամբանադաշտի № 4 դամբանաբլրի № 23 թաղումում մեծահասակ տղամարդու կոնքոսկրերի մոտ դրված էր կաթսա՝ մեջը փայտե բռնակի մնացորդներով երկճանկ կեռ [Шилов, Багаутдинов 1998, 167]:

53 Ильюков 1979, 143, 145.

54 Մարտիրոսյան 2015, 142:

կաթսայից մսի՝ սրբազան գործիքով հանելու արարողությունն էր: Այդ են վկայում նաև Լոռի բերդի № 6 դամբանի կաթսայի մեջ գտնված հորթի ողնաշարի կտորները և ձիու ֆալանգը, իսկ № 79 դամբանի կաթսայի մեջ՝ ԽԵԱ-ի (երկու առանձնյակ) տարբեր մասերը: Վանաձորի «թագավորական» դամբանի արևելյան պատի երկու անկյուններում ԽԵԱ-ների գլուխներ և վերջույթներ էին դրված[55]: Քարաշամբի № 633 դամբանի արևելյան կողմում դրված անոթի մոտ բացվել էր ԽԵԱ-ի երրորդ կմախքը, որի տակ դրված էին բրոնզե դաշույն և կեռ, իսկ № 750 դամբանի հյուսիսարևելյան անկյունում, ԽԵԱ-ի ոսկորների մոտ՝ երեք պատվանդանի վրա կանգնեցված բրոնզե կաթսա: Բրոնզե մեկ դաշույն, արծաթե գոտեկապով նիզակի հետ միասին, գտնվել է ԽԵԱ-ի վերջույթների մոտ, իսկ բրոնզե կեռը գտնվել են ԽԵԱ-ի աջ ստորին վերջույթի մոտ[56]: Ցիտելգորբիի № 1 դամբանում նույնացվել է վեց ցուլ (որոնցից երկուսը դրված է խցի գլխապատի տակ), չորս ձի և չորս ոչխար[57]: Այս կենդանիների մոտ դրված կաթսաների մեջ էլ գտնվել են կեռերը[58]: Կենդանիների ոսկորներ են հայտնաբերվել նաև Լճաշենի №№ 2, 3, 8 դամբանի կաթսաների մեջ:

Հավանաբար թաղման ճաշկերույթի գլխավոր սնունդը կաթսայում եփվող ԽԵԱ-ի միսն էր: Այսպիսով, ըստ հնագիտական տվյալների, կեռ պարունակող դամբաններում ԽԵԱ-ի զոհաբերության ծեսը ուներ առանցքային նշանակություն[59]:

Այսպիսով, դատելով միաճանկ, երկճանկ կեռերի և հայաստանյան կեռերի առաջին տիպի ի հայտ գալու համատեքստից, դրանք օգտագործվել են առանձնաշնորհյալի թաղման ժամանակ՝ ճաշկերույթի արարողության ընթացքում, երբ զոհաբերված կենդանուն խորհրդանշող կեռով կաթսայից դուրս էր բերվում կերակուրը:

Այն հանգամանքը, որ Հայաստանի՝ կաթսա պարունակող ոչ բոլոր դամբաններում են առկա կեռեր, վկայում է կեռ պարունակող և չպարունակող դամբանների «*տերերի*»՝ սոցիալական հարաբերություններում տարբեր կարգավիճակների մասին:

Ցլագլուխ կեռը՝ իշխանության խորհրդանիշ

Եթե առաջին տիպի կեռերը հանդիպում են կաթսաների ուղեկցությամբ, ապա երկրորդ տիպի Բ տարբերակի կեռերը փաստագրվել են կամ աճյունի դիմաց (մոտ) դրված, կամ վերին վերջույթների շրջանում:

Ելնելով այն հանգամանքից, որ Ավրանլոյի օրինակը դրված է եղել աճյունի գանգի դիմաց, իսկ ձեռքերի մոտ՝ բրոնզե ցլագլուխ վերնամասը և

55 Դևեջյան 2006, 20, 67, 251:

56 Melikyan 2015, 8, 9.

57 Abramishvili R., Abramishvili M. 2008, 352, 354, fig. 2, B:2, A:3.

58 Abramishvili R., Abramishvili M. 2008, 352.

59 Այս դրույթն ամրապնդվում է վաղնջահայերենում տավարի՝ ***դաան*** *(h-ti՝ *dap-n-) «զոհաբերական կերակուր, զոհական ճաշկերույթ»* և ***դուար*** *(h-ti՝ *dīp-r̥) «զոհաբերության կենդանի»* բառերի ստուգաբանությամբ [Մարտիրոսյան 2015, 141–142]:

գոտեկապը[60], ենթադրում ենք, որ Տոլորսի, «Դիմացի» և Սիրխովենդի համանման առարկաները ևս պետք է դրված լինեին աճյունի դիմաց և ներկայացնեին *մական*՝ իշխանության խորհրդանիշ: Ուսումնասիրողները ուշադրություն են հրավիրում Կալխու քաղաքի պատերազմի աստված Նինուրտայի տաճարում կանգնեցված Աշուր-նաձիրա-պալ Բ թագավորի (884–859 թթ.) արձան վրա. նա աջ ձեռքում բռնել է կեռ-մական, իսկ ձախում՝ գավազան[61].

Ինչպես խեթական արքաների հովանավոր ամպրոպի ցլակերպ աստված Թեշուբը, այնպես էլ ուրարտական Թեյշեբան[62] պատկերված են ցլի վրա կանգնած մորուսավոր մի աստվածության տեսքով[63]: Ըստ երևույթին, նախաուրարտական տեղական ցեղային միությունների առաջնորդների հովանավոր աստվածությունը նույնպես եղել է ամպրոպային բնույթի և պատկերվել է ցլակերպ: Այս պարագայում կեռ-մականը պետք է մեկնաբանել որպես իշխանության խորհրդանիշ՝ ինչպես որ Հին Եգիպտոսում և Խաթթիում էր: Այս պարագայում նկատելի է *կեռ-գավար(ցուլ)-հովիվ-քուրմ-առաջնորդ* իմաստաբանական կապը:

Քուրմ-արքան՝ «ժողովրդի հովիվ»

Ըստ հնագիտական տվյալների՝ Կովկասում և Հայաստանում պեղված կաթսայի և կեռի համատեղ թաղումների «տերերը» նույնացվում են համայնքի առանձնաշնորհյալների հետ, որոնք կարող էին ունենալ նաև հոգևոր իշխանություն:

Մ.թ.ա. 3–2-րդ հազ. մի շարք տարածաշրջաններում (Հին Եգիպտոս, Խաթթի, Ասորեստան ևն) կեռաձև գլխով գավազանը կամ կեռը համարվել է բարձրագույն հոգևոր իշխանության խորհրդանիշ: Հին Եգիպտոսում կեռի խորհրդանիշը՝ «heqa»-ն, նշանակում էր «իշխողի գավազան», «հովվի գավազան»[64] և համարվում էր նաև փարավոնների և որոշ աստվածների (հիմնականում Օսիրիսի) խորհրդանիշը: Կեռը մարմնավորում էր վերակենդանացման, հոգևոր իշխանության գաղափարները[65]:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում Ալաջա հույուքի (Փոքր Ասիա) օրթոստատի վրա պատկերված տեսարանը[66]: Այստեղ թագուհին և արքան տոնական հագուստներով (տունիկա կամ մանտիա) են, ինչը հիշեցնում

60 Нариманишвили 2005, 141, 16/6–8; Narimanishvili 2010, 323:

61 Reade 1998, 22, fig.12.

62 Համապատասխանությունը ոչ միայն անվանական մակարդակում է, այլև՝ գործառույթների [Գրեկյան 2018, 31]:

63 Հմայակյան 1990, 42:

64 Focke 1950, 337–387.

65 Հայ առաքելական և կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսների ծիսական հատուկ ավազաններն ունեն դեպի ներս թեքված կեռաձև գլուխ [Օրմանյան 1991, 6]): Եպիսկոպոսական հովվական կեռագլուխ գավազանների և մերձավորարևելյան կեռագլուխ գավազանների կապի մասին տես Braun 1948, 792.

66 Vigo et al. 2014, նկ. 5.4.

է խեթական քրմական հանդերձանքը[67]: Արքան աջ ձեռքում բռնել է «հովվական» կեռ-մականը[68]: Վերջինիս դիմաց *զոհասեղան* է պատկերված, իսկ բարձր պատվանդանի վրա կանգնած է Ամպրոպի աստված Թեշուբի կենդանակերպ դրսևորումը՝ ցուլ[69]: Խաթթիի արքաներից Թուդխալիա IV-ը (մ.թ.ա. 1238–1215 թթ.) Յազըլըքայայի ժայռակերտ սրբարանում (ինչպես Ալաջա Հոյուքի բարձրաքանդակում պատկերված արքան) ներկայացված է «հովվական» կեռ-մականով: Գ. Բեքմանը նշում է, որ «*հովվական*» գավազանը՝ կեռը, թագավորական տան խորհրդանիշն էր, և այստեղ արքան հանդես է գալիս որպես քուրմ՝ «ժողովրդի հովիվ»[70]:

Քուրմ-արքայի *հովիվ* մակդիրը հանդիպում է ինչպես խեթական տեքստերում, այնպես էլ վաղ ուրարտական շրջանի արքաների տիտղոսաշարում: Սարդուրի I-ը (մ.թ.ա. 834–825 թթ.) Տուշպայի ասուրերեն արձանագրության մեջ իրեն կոչում է «**զարմանալի հովիվ**, որը չի վախենում մարտից, արքա, որը հնազանդեցնում է անհնազանդներին»[71]:

Այսպիսով, խեթական և ուրարտական արքաների տիտղոսաշարերում առկա *հովվական* մակդիրը խորհրդանշում էր արքայի հոգևոր գործառույթները: «Հովվական գավազանը» պատկերվում է պարույրի, կեռի կամ ուղղակի գավազանի տեսքով, ինչը համապատասխանում է հովվի գավազանին: ԽԵԱ-ներից կազմված հոտը, որպես կանոն, առաջնորդում է մարմնեղ ցուլը կամ կովը: Ըստ երևույթին, հոտն առաջնորդող կենդանու գաղափարն է ընկած հենց երկճանկ և հետագայում նաև միաճանկ կեռերի խորհրդաբանության հիմքում:

Եզրակացություն

Տարածաշրջանի բրոնզ-երկաթեդարյան կեռ պարունակող համալիրների քննության արդյունքում ըստ ձևի առանձնացվել է կեռերի հինգ տիպ՝ 1) միաճանկ, խողովակակոթառ, 2) միաճանկ կոթավոր, 3) երկար ոլորուն իրանով միաճանկ, 4) երկճանկ, 5) կեռանման առարկաներ: Կեռերը հանդիպում են միջին բրոնզի դարաշրջանում՝ Թոեղք-վանաձորյան մշակույթի համալիրներում, կաթսաների համատեքստում: Ուշ բրոնզի և երկաթի դարերում ևս կեռերը հանդիպում են կաթսաների համատեքստում: Կաթսաների համատեքստում հայտնաբերված կեռերի առաջին տիպը պետք է գործածվեր թաղման ծեսի ընթացքում տավարի (ցլի) զոհաբերության ծեսի արարողության ժամանակ՝ կեռով կաթսայից զոհաբերության միսը հանելու նպատակով: Հավանաբար նույն գործառույթն են ունեցել 3-րդ, 4-րդ տիպերի կեռերը:

Երկճանկ և միաճանկ կեռերը խորհրդանշում էին ցլի եղջյուրները (բուկ-

67 Vigo et al., 2014, 125–126.

68 Ալաջա Հոյուքի արքայի այս պատկերը հագուստով և կեռ-գավազանով հիշեցնում է Թուդխալիա IV-ի բարձրաքանդակը [Beckman 2002, 42]:

69 Vigo et al. 2014, fig. 5.4.

70 Beckman 2002, 41–42.

71 Բաղալյան 2018, 114:

բանիա) կամ ցլի պատկերումով որևէ աստվածության: Խողովակակոթաո կեռերն այս իմաստաբանությունը պահպանում են մինչև երկժանիների ի հայտ գալը, որից հետո դրանք իրենց վրա են վերցնում կեռի գործառույթը: Ցլագլուխ արձանիկով կեռերը (2-Բ տիպ), սկսած ՈՒԲ-ՎԵ դարերից, որոշ տարածքներում դառնում են իշխանության խորհրդանիշ՝ կեռ-մական, որոնք առանձնաշնորհյալները կրում էին որպես հոգևոր իշխանության խորհրդանիշ: Բրոնզ-երկաթեղարյան «սրբարաններից» հայտնաբերված փոքրադիր կեռերը եղել են նվիրատվական առարկաներ:

Կեռերի և կաթսաների, իսկ հետագայում արդեն կաթսաների և երկ-, եռաժանիների նույն համատեքստում ի հայտ գալու հանգամանքը խոսում է ընդհանուր պատկերացումների գոյության մասին:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԹՎ – Թռեղք-վանաձորյան
ԼՓԵԹ – Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան
ԽԵԱ – Խոշոր եղջերավոր անասուն
ՀԱԱՊԹ – Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան
ՄԲ – Միջին բրոնզ
ՈՒԲ – Ուշ բրոնզ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՐԵԿՅԱՆ և այլք 2018,
Գրեկյան Ե.Հ., Բաղալյան Մ.Ս., Տիրացյան Ն.Գ., Պետրոսյան Ա.Ե., Բիայնիլի-Ուրարտու. աստվածներ, տաճարներ, պաշտամունք, Երևան, ՀԱԻ հրատ., 2018:

ԴԵՒԵՋՅԱՆ 1986
Դևեջյան Ս.Հ., Լոռի բերդի քրմի դամբարանը // Պատմա-բանասիրական հանդես, 1986, №3, 108–124:

ԴԵՒԵՋՅԱՆ 2006
Դևեջյան Ս.Հ., Լոռի Բերդ II, Երևան, «Գիտություն», 2006:

ԴԵՒԵՋՅԱՆ 2022
Դևեջյան Ս.Հ., Լոռի Բերդ III, Երևան, ՀԱԻ հրատ., 2022:

ԵՍԱՅԱՆ 1987
Եսայան Ս.Ա., Հայաստանի բրոնզեդարյան մետաղյա սպասքները // Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, №2, 58–67:

ԹՈՐՈՍՅԱՆ և այլք, 2002
Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա., Հին Շիրակավան (1977–1981 թթ. պեղումների արդյունքները), (խմբ.՝ Պ.Ս. Ավետիսյան), Երևան, «Գիտություն», 2002:

ՀՄԱՅԱԿՅԱՆ 1990
Հմայակյան Ս.Գ., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1990:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 2015
Մարտիրոսյան Հ.Կ., Երկնային ակունքի ֆառնը, Արշալույսի դիցուհին և գլխի ու մորթու զոհածեսը վիշապակոթողների իմաստաբանական հենքում // Վիշապ քարակոթողները, ՀՀ ԳԱԱ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ (խմբ.՝ Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան), Երևան, «Գիտություն», 2015, 136–170:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 1957
Մնացականյան Հ. Հ., Ցեղապետի դամբանաթումբը // Սովետական Հայաստան, 6, №7 հուլիս, 1957, 41–42:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2018
Պետրոսյան Լ. Ա., Լճաշենի դամբանադաշտը (պարբերացում, ժամանակագրում) // Հայաստանի հնագիտական հուշարձանները, №22, Երևան, «Գիտություն», 2018:

ՕՐՄԱՆՅԱՆ 1991
Օրմանյան արք. Մ., Ծիսական բառարան, Երևան, «Հայաստան», 1991:

ГАМБАШИДЗЕ и др. 2010
Гамбашидзе И., Миндиашвили Г., Гогочури Г., Кахиани К., Джапаридзе И., Древнейшая металлургия и горнорудное дело в Грузии в 6–3 тыс. до н.э., Тбилиси, «Мцигнобари», 2010.

ГНУНИ 2003
Гнуни А. В., Опыт анализа погребального инвентаря двух погребений эпохи средней бронзы Армении (на основе данных индийской мифологии) // Вестник общественных наук, 2003, №2, 72–90.

ГОРБУНОВ 1992
Горбунов В. С.. Бронзовый век Волго-Уральской лесостепи. Уфа, БГПИ, 1992.

ИЛЬЮКОВ 1979
Ильюков Л. С., Металлические ‘’вилки” майкопский культуры // Советская археология, 1979, №4, 138–145.

КРУПНОВ 1960
Крупнов Е. И., Древняя история Северного Кавказа, Москва, 1960.

КУШНАРЕВА 1957
Кушнарева К. Х., Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе // Советская археология, 1957, вып. XXVII, 135–177.

МАРТИРОСЯН 1964
Мартиросян А. А., Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, АН Арм. ССР, 1964.

МАРТИРОСЯН, ХАЧАТРЯН 1959
Мартиросян А. А., Хачатрян Т. С., Комплекс изделий из могильника Такиа (Агвесадзор) // Известия АН Арменской ССР. Обшественные науки, 1959, №11–12, 87–96.

МНАЦАКАНЯН 1954
Мнацаканян А. О., Новые находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре Армянской ССР) // Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории материальной культуры, 1954, №54, 99–104.

МНАЦАКАНЯН 1957
Мнацаканян А. О., Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г. // Советская археология, 1957, №2, 146–153.

НАРИМАНИШВИЛИ 2005
Нариманишвили Г., К изучению знаков отличия (инсигния из Триалети) // Археология, этнология, фольклористика Кавказа, Баку, «Нурлар», 2005, 141–142.

РИГВЕДА
Ригведа, Мандалы, I-IV, 2-е издание (изд. подготовила Т. Я. Елизаренкова, отв. ред. П. А. Гринцер), Москва, «Наука», 1999.

ХАЧАТРЯН 1959
Хачатрян Т. С., Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении // Աշխատություններ Հայաստանի պետական Պատմական թանգարանի, Երևան, 1959, 5, 203–258.

ХАЧАТРЯН 1975
Хачатрян Т. С, Древняя культура Ширака III-I тыч. до н.э., Ереван, Ереванский гос. унив., 1975.

ШИЛОВ, БАГАУТДИНОВ 1998
Шилов В.П., Багаутдинов Р.С., Погребения энеолита-ранней бронзы могильника Эвдык // Проблемы древней истории Северного Прикаспия, Самара, Издательствп Самарского Государственного педогогического универстита, 1998, 160–178.

ABRAMISHVILI R., ABRAMISHVILI M. 2008
Abramishvili R., Abramishvili M., Late Bronze Age Barrows at Tsitelgorebi // Archaeology in Southern Caucasus: Perspectives from Georgia, Ancient Near Eastern Studies Supplement Series (Book 19), 2008, «Peeters», 351–363.

BECKMAN 2002
Beckman G., My Sun-God. Reflections of Mesopotamian Conceptions of Kingship among the Hittites // Ideologies as Intercultural Phenomena. Proceedings of the Third Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project (A. Panaino and G. Pettinato (eds.). Held in Chicago, USA, October 27–31, 2000, Milan: Università di Bologna & IsIao, 2002, 37–43.

BRAUN 1948
Braun J., Bischofsstab (und Abtsstab) // Reallexikon zur Deutschen Kunstgeschichte, Band 2, Druckenmüller, 1941, Band 2, 792–800.

FOCKE, 1950
Focke F., Szepter und Krummstab. Eine symbolgeschichtliche Untersuchung // Festgabe für Alois Fuchs zum 70. Geburtstage am 19. Juni 1947 (ed. Wilhelm Tack), Baderborn, 1950, 337–387.

GALE 1991
Gale N. H, Metals and Metallurgy in the Chalcolithic Period // Bulletin of the American Schools of Oriental Research, No. 282/283, Symposium: Chalcolithic Cyprus, May - Aug., 1991, 37–61.

GHIRSHMAN 1939
Ghirshman R., Fouilles de Sialk, pres de Kashan, 1933, 1934, 1937, Paris, P. Geuthner, 1939.

MELIKYAN 2015
Melikyan V.V., Newly Found Middle Bronze Age Tombs of Karashamb Cemetery: Preliminary Report // Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2015, Vol. IX, Issuse 1, 7–28.

NAGEL, STROMENNGER 1985
Nagel W., Stromennger E., Kalakent, Früheisenteitliche Grabfunde aus dem Transkaukasischen Gebiet von Kirovabad/Jelisavetpol, Berliner Beiträge zur Vor- nd Frühgeschichte, Neue Folge, Band 4, Berlin, Volker Spiess, 1985, 192 S. Mit mont. Farbtafel, 108 Textabb.

NARIMANISHVILI 2010
Narimanishvili 2010 - Narimanishvili G., Trialeti in the 15th and 14th centuries BC, Rescue archaeology in Georgia: Baku-Tbilisi-Ceyhan South Caucasian Pipeline, Tbilisi, 2010, 313–369.

NEGAHBAN 1996a
Negahban E., Marlik: The complete excavation report, Philadelphia, Univ. Museum, Univ. of Pennsylvania, vol. 1, Text, 1996.

NEGAHBAN 1996b
Negahban E., Marlik: the complete excavation report, Philadelphia, Univ. Museum, Univ. of Pennsylvania, vol. 2, Illustrations, 1996.

READE 1998
Reade J.E., Assyrian Sculpture, London, The British Museum Press, 1998.

PILLER 2008
Piller C., Untersuchungen zur relativen Chronologie der Nekropole von Marlik, Dissertation an der Fakultät für Kulturwissenschaften der L. Maximilians-Universität München, München, 2008.

PIZCKHELAURI 1984
Pizckhelauri K., Jungbronzezeitliche bis ältereisenzeitliche Heiligtümer in Ost-Georgien. Materialen zur Allgemeinen und Vergleichenen Archäologie, B. 12, München, Beck C.H., 1984.

SCHMIDT 1933
Schmidt E., Excavations at Tepe Hissar, Damghan, Philadelphia, Univ. Museum, 1933.

VIGO ET AL. 2014
Vigo M., Bellucci B., Baccelli G., Elements for a Comparative Study of Textile Production and Use in Hittite Anatolia and Neighbouring Areas // Prehistoric, Ancient Near Eastern and Aegean Textiles and Dress: An Interdisciplinary Anthology (M. L. Nosch, C. Michel, & M. Harlow (Eds.), Ancient Textile Series ed., 2014, Vol. 18, 97–142.

Benik V. Vardanyan
History Museum of Armenia

BRONZE AND IRON AGES HOOKS ON THE TERRITORY OF THE KURA-ARAXES INTERFLUVE

Keywords: The Bronze and Iron Ages, ritual, hook, metal cauldron, offering, symbol of domination, votive hooks, fishing hooks, BC.

The presented paper is based on the morphological features of the hooks found at the sites of the Middle, Late Bronze and Iron Ages, on the territory of the Kura and Araxes Interfluve. Seven types of hooks have been identified and grouped according to their functional and chronological characteristics. The first type of expanding tubular hooks originates from the Middle Bronze Age tombs in Armenia. They were mainly found in the context of bronze or copper cauldrons and were interpreted as sacred objects that were used to lift sacrificial bull meat from the cauldron during the funerals of tribal nobility. Single-horned and twin-horned hooks symbolized the bull head (“bucrania”). In the Late Bronze Age, the hooks were gradually taken out of use, and the function of those was taken over by the bronze bidents.

There are burials of the Late Bronze and Early Iron Ages simultaneously containing hooks, bidents and cauldrons. The second, fourth and fifth types of hooks are exclusive only for the Late Bronze Age. They may have a dual purpose. Hooks of "b" variety of the third type are decorated with sculpted bull heads and have a wooden handle. Like the Egyptian and Hittite ones, the shepherd's crooks/scepters symbolized the power and occur exclusively from the graves of the elite. These appear at the sites dated to the Bronze Age (for example, in Avranlo, Georgia) and the Iron Age in Lori (Vanadzor), Syunik (Tolors) and Artsakh (Archadzor, Sirhovend).

Among the discussed subjects, the fishing hooks found in Zolakar (Lake Sevan basin) and Dvin (the Ararat plain) (type 7) are also worth mentioning.

Беник Варданович Варданян
Музей истории Армении

КРЮКИ В ЭПОХУ БРОНЗЫ И ЖЕЛЕЗА В КУРО-АРАКССКОМ МЕЖДУРЕЧЬЕ

Ключевые слова: эпоха бронзы и железа, крюки, типология, котлы, жертвоприношение быка, символ власти, вотивные крюки, рыболовные крюки, до н.э.

Основываясь на морфологических особенностях крюков, найденных на памятниках среднего и позднего бронзового и железного веков на территории междуречья рек Кура и Аракс, выделяется семь типов, которые также сгруппированы по функциональным и хронологическим характеристикам. Первый тип расширяющихся трубчатых крюков происходит из погребальных комплексов аристократов эпохи средней бронзы (триалети-ванадзорская культура) в Армении. Эти предметы были обнаружены в контексте бронзовых или медных котлов и были интерпретированы как священные предметы, которые использовались для извлечения жертвенного бычьего мяса из котла во время погребальной церемонии племенной знати. Однорогие и двурогие крюки символизировали голову быка («букрания», с греч. яз.). На позднем этапе позднего бронзового века крюки постепенно выходят из употребления, а их функцию начинают выполнять бронзовые двузубцы.

В позднем бронзовом и раннем железном веках известны погребения, в которых одновременно встречаются крюки, двузубцы и котлы. Второй, четвертый и пятый тип крюков встречаются на территории Армении только в позднем бронзовом веке. Они могут иметь двойное назначение. Крюки варианта «б» третьего типа украшены скульптурными головами быка и имеют деревянную рукоять. Подобно египетским и хеттским, пастушьи посохи с крюками являлись символами власти и происходили исключительно из могил привилегированных особ. Они появляются в конце бронзового века (например, в Авранло, Грузия) и железного века в Лори (Ванадзор), Сюнике (Толорс) и Арцахе (Арчадзор, Сирховенд).

Среди крюков можно также выделить рыболовные (тип 7), обнаруженные в Золакаре (бассейн оз. Севан) и Двине (Араратская равнина).

Ներկայացվել է՝ 02.07.2022,
գրախոսվել է՝ 10.08.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:



Նկ. 1. Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերի տարածվածությունը.
1) *Վանաձոր,*
2) *Լոռի բերդ,*
3) *Քարաշամբ,*
4) *Ժինվալ,*
5) *Լճաշեն,*
6) *Արթիկ,*
7) *Ցիրելգորեբի,*
8) *Սաֆար-խարաբա,*
9) *Շիլդա,*
10) *Ակրանլո,*
11) *Պարադիգֆեսրուգ,*
12) *Գոգդաջա,*
13) *Սիրխովենդ*
(հեղ.՝ Լ. Մկրտչյան)



Նկ. 2. **1)** Վանաձոր (Դևեջյան 2006, 251, նկ. 140/5),
2) Լոռի բերդ №6 (Деведжян 1981, табл. II, 5)
3-4) Լոռի բերդի №79 (Դևեջյան 2006, 20, 67, նկ. 72/6, 99/2-3),
5) Քարաշամբ №750 (Melikyan 2015, 9, fig. 14/2)
6) Լճաշենի №2 (Պետրոսյան 2018, աղ. 141/2),
7) Լճաշենի №3 (ՀՊԹ 2007/68),
8-9) Լոռի բերդ №25, 46 (Դևեջյան 2022, աղ. 51, 7, 95, 5),
10) Պարադիզֆեսլոնգ №112 (Nagel, Strommenger 1985, 117, Abb. 87),
11) Գոգդաջա №3 (Nagel, Strommenger 1985, Taf. 65, 2.2544 k),
12) Շիլդա (Pizckhelauri 1984, 42-65, Abb. 41. 20-22)



Նկ. 3. ***1)*** *Քարաշամբ №633 (Melikyan 2015, Fig. 15.2),*
2-3) *Ավրանլո (Шаншашвили и др., 2016, 16, 6-8),*
4) *Վանաձոր (ԼՓԵԹ 316),*
5) *Սիրիսովենդ (Кушнарева 1957, Рис. 10, 3),*
6) *Լոռի բերդ №15 (Դևեջյան 2022, աղ. 30, 2),*
7) *Սաֆար-խարաբա №8 (Шаншашвили и др., 2016, табл. LVIII, LXI, 1),*
8) *Արթիկ №335 (Хачатрян 1975, 219, рис. 130), 9),*
9) *Սիալկ №3 (Ghirshman 1939, Pl. L, 545),*
10) *Լոռի բերդ №21 (Դևեջյան 2022, աղ. 43, 6) Լոռի բերդ №84 (Դևեջյան 2022, աղ. 129, 4)*

Նկ. 4. Լճաշենի №3 Մեծ դամբանաբլրի կեռը (ՀՊԹ 2007/68, հեղ.՝ Վ. Հակոբյան)

Նկ. 5. Լճաշենի №8 Մեծ դամբանաբլրի կեռը (ՀՊԹ 2049/140, հեղ.՝ Վ. Հակոբյան)

Նկ. 6. Լճաշենի Ի-78 Մեծ դամբանաբլրի կեռը (ՀԱԱՊԹ 2138/69ա-գ, հեղ.՝ Բ. Վարդանյան)

Նկ. 7. Լճաշենի №2 Մեծ դամբանաբլրի կեռը (ՀՊԹ 2007/112, հեղ.՝ Վ. Հակոբյան)

Նկ. 8. Տոլորսի վաղերկաթեդարյան դամբանաբլրի կեռը (ՀՊԹ 1911-4, 5, 24, հեղ.՝ Վ. Հակոբյան)

Նկ. 9. Վանաձորի «Դիմաց» դամբանադաշտից հայտնաբերված կեռը (ԼՓԵԹ 316, հեղ.՝ Բ. Վարդանյան)



Նկ. 10. Լճաշենի №8-1 Մեծ դամբանաբլրի կեռը (ՀՊԹ 2009/384, հեղ.՝ Վ. Հակոբյան)

Նկ. 11. Լճաշենի №10 Մեծ դամբանաբլրի կեռը (ՀՊԹ 2009/340, հեղ.՝ Վ. Հակոբյան)

Նկ. 12. Լճաշենի №1 Մեծ դամբանաբլրի կեռը (ՀՊԹ 2007/17, հեղ.՝ Վ. Հակոբյան)

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5